Արձանագրություն

ԵՊՀ Ժուռնալիստիկայի ֆակուլտետի գիտխորհրդի 2026 թ. փետրվարի 19-ի թիվ 6 նիստի

Գիտխորհրդի նախագահ Ն. Մարտիրոսյանը տեղեկացրեց, որ գիտխորհրդի 20 անդամներից ներկա են 16-ը, քվորումն ապահովված է, և առաջարկեց հաստատել նիստի օրակարգը: Գիտական խորհուրդը բաց քվեարկությամբ (միաձայն) հաստատեց օրակարգը, որում ներառված էին հետևյալ հարցերը.

1. *Մեդիաուսումնասիրությունների ու նշանագիտության ամբիոնի վարիչի ընտրություն*
2. *Անվանական կրթաթոշակների հավակնորդների հաստատում*

ԼՍԵՑԻՆ. – Մեդիաուսումնասիրությունների ու նշանագիտության ամբիոնի վարիչի ընտրության հարցը:

Նիստը նախագահող Ն. Մարտիրոսյանը տեղեկացրեց, որ ամբիոնի վարիչի մրցույթի համար դիմել է բ.գ.դ., պրոֆեսոր Տիգրան Սիմյանը: Այնուհետև Ն. Մարտիրոսյանը խոսքը փոխանցեց ֆակուլտետի գիտխորհրդի քարտուղար Զարուհի Սարգսյանին՝ ներկայացնելու թեկնածուի կենսագրությունը:

Նիստը նախագահող Ն. Մարտիոոսյանը առաջարկեց ծրագրային ելույթի համար սահմանել մինչև 10 րոպե: Գիտխորհրդի անդամները բաց քվեարկությամբ (միաձայն) համաձայնեցին: Ծրագրային ելույթով հանդես եկավ Տ. Սիմյանը: Ելույթից հետո նախագահողի առաջարկով խորհրդի անդամները իրենց հետաքրքրող հարցերը ուղղեցին Տ. Սիմյանին: Վերջինս պատասխանեց բոլոր հարցերին:

Այնուհետև նախագահողը գիտական խորհրդի անդամներին ներկայացրեց փակ, գաղտնի քվեարկության կարգը, ապա առաջարկեց փակ, գաղտնի քվեարկություն անցկացնելու և դրա արդյունքներն ամփոփելու նպատակով ֆակուլտետի գիտական խորհրդի անդամներից ընտրել երեք հոգուց կազմված հաշվիչ հանձնաժողով: Առաջարկվեցին գիտխորհրդի անդամներ Դ. Պետրոսյանի, Ա. Մենեմշյանի և Ա. Առաքելյանի թեկնածությունները: Այլ առաջարկներ չեղան: Նախագահողն առաջարկեց բաց քվեարկությամբ հաստատել հաշվիչ հանձնաժողովի կազմը: Գիտական խորհուրդը քվեարկեց միաձայն: Սահմանված կարգով անցկացվեց փակ, գաղտնի քվեարկություն:

Այնուհետև հաշվիչ հանձնաժողովի նախագահ Դ. Պետրոսյանը հրապարակեց քվեարկության արդյունքները՝ տեղեկացնելով, որ գիտական խորհրդի 20 անդամներից քվեարկությանը մասնակցել է 16-ը: Բաժանվել է 16 քվեաթերթիկ, քվեատուփում առկա է եղել 16 քվեաթերթիկ: Ձայները բաշխվել են հետևյալ կերպ. կողմ՝ 16, դեմ՝ 0, անվավեր՝ 0: Նիստի նախագահը առաջարկեց բաց քվեարկությամբ հաստատել փակ, գաղտնի քվեարկության արդյունքները:

Խորհուրդը միաձայն «կողմ» քվեարկեց:

ՈՐՈՇԵՑԻՆ. – Հաշվի առնելով փակ, գաղտնի քվեարկության արդյունքները, բ.գ.դ., պրոֆեսոր Տ. Սիմյանին համարել ընտրված Մեդիաուսումնասիրությունների ու նշանագիտության ամբիոնի վարիչի պաշտոնում:

ԼՍԵՑԻՆ. – Անվանական կրթաթոշակների հավակնորդների հաստատման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.- *Ն. Ն. Մարտիրոսյան, Դ. Վ. Պետրոսյան, Ա. Ռ. Մենեմշյան, Ն. Է. Վարդանյան:*

Անցկացվեց բաց քվեարկություն: Խորհուրդը միաձայն «կողմ» քվեարկեց բոլոր հավակնորդներին:

ՈՐՈՇԵՑԻՆ.- Հաշվի առնելով քվեարկության արդյունքները՝ երաշխավորել բակալավրիատի առկա ուսուցման 4-րդ կուրսի ուսանողուհի **Էմմա Անդրանիկի Վարդանյանին (մոգ 19.80)** 2026 թ. մարտի 1-ից ստանալու **«Գաբրիել Մոլոյեան»** անվանական կրթաթոշակը, բակալավրիատի առկա ուսուցման 4-րդ կուրսի ուսանողուհի **Մարինե Էդգարի Զոհրաբյանին (մոգ 19.98)** 2026 թ. մարտի 1-ից ստանալու **«Հովհաննես Ադամյան»** անվանական կրթաթոշակը, բակալավրիատի առկա ուսուցման 3-րդ կուրսի ուսանողուհի **Նարե Գեորգիի Շավինյանին (մոգ 19.81)** 2026 թ. մարտի 1-ից ստանալու **«Արտաշես Քալանթարյան»** անվանական կրթաթոշակը, բակալավրիատի առկա ուսուցման 3-րդ կուրսի ուսանողուհի **Անի Աշոտի Սայադյանին (մոգ 19.75)** 2026 թ. մարտի 1-ից ստանալու **«Հարություն քահանա Շմավոնյան»** անվանական կրթաթոշակը:

ՆԻՍՏԻ ՆԱԽԱԳԱՀ Դ.Ն. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ Զ. Զ. ՍԱՐԳՍՅԱՆ